ներին։ Յատկապէս գնդակահարուած է ընկ. Միկոյեանը։ Խորհրդային կառավարութիւնը մեծ վրդովմունքով իմացաւ Հայաստանի կոմունիստական շարժման գործիչների վերաբերմամբ գործադրուող կամայականութիւնների մասին»։

Մարդիկ խօսում էին հազարաւոր սպանուածների մասին, այն ինչ, ամբողջ բոլշևիկեան շարժման ընթացքում բոլոր ձերբակալուած բոլշևիկների թիւը Հայաստանում 234 էր, որոնցից 120 հոգին ազատ էին արձակուած և մահապատժի էին դատապարտուած 3 հոգի։ Լուրեր էին տարածում, որ գնդակահարուած է Միկոյեանը, մինչ Միկոյեանը Հայաստանի երես անգամ չէր տեսած։

Հայ բոլշևիկների նման ընթացքն էր, որ անյաջողութեան մատնեց Հայաստանի Հանրապետութեան ու Խորհրդային Ռուսաստանի միջև սկսուած բանակցութիւնները։

Հիւսիսային Կովկասը խորհրդային իշխանութեան ձեռքը անցնելուց յետոյ Խորհրդային Ռուսաստանի պատասխանատու ներկայացուցիչներից ոմանք, Հայաստանի հիւսիսային ներկայացուցիչների միջոցով, քանիցս խորհուրդ էին տուել պաշտօնական բանակցութիւններ սկսել Մոսկուայի հետ՝ բարեկամական դաշինք կնքելու նպատակով։ Հայաստանի կառավարութիւնը ինքն էլ գտնում էր նման քայլի անհրաժեշտութիւնը, մանաւանդ, երբ կարմիր բանակը մօտեցաւ Ադրբէջանին։ Ապրիլի վերջերին Երևանում կազմուեց մի պատուիրակութիւն — նախագահ՝ Լ. Շանթ, անդամներ՝ Հ. Տէրտէրեան և Լ. Զարաֆեան, որին յանձնարարուեց անմիջապէս մեկնել Մոսկուա խորհրդային իշխանութեան հետ, յանուն Հայաստանի, բանակցութիւններ վարելու և բարեկամական դաշինք կնքելու նպատակով։ Պատուիրակութեան տրուեցին հետևեալ հրահանգները. 1. Խորհրդային Ռուսաստանը պէտք է ճանաչէ Հայաստանի անկախութիւնը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում և Ղարաբաղն ու Գիւլիստանը, 2. Խորհրդային Ռուսաստանը, դոնէ սկզբունքով, պէտք է ընդունէ թիւրքահայ հողերի կցումը Հայաստանին, 3. Խորհրդային Ռուսաստանը չպիտի միջամտէ Հայաստանի ներքին գործերին. չպիտի Հայաստանում կոմունիստական գործունէութիւն ցոյց տայ, 4. Խորհրդային Ռուսաստանը պիտի թոյլ տայ, որ Հիւսիսային Կովկասում և Ռուսաստանում գտնուող հայ գաղթականները վերադառնան Հայաստան, և մի շարք ուրիշ հարցեր։

Պատուիրակութիւնն անյապաղ մեկնեց Մոսկուա։ Այդ առթիւ, մայիս 4-ին վարչապետ Օհանջանեանը Զիչերինին քաշեց հետևեալ հեռագիրը.

«Բանուորական, գիւղացիական ու գիւղացիական պատգամաւորների համառուսական երրորդ համագումարի որոշման համաձայն, որ յայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատութիւնը, և հիմնուելով ժողովրդական կոմիսարների նախագահ Լենինի 1918թ. յունս. 13 դեկտեմբերի վրա՝ անկախ, միացեալ, դեմոկրատիկ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն առաջարկում է Ռուսաստանի ընկերվարական կառավարութեանը բանակցութիւնների մէջ մտնել նրա հետ երկու Հանրապետութիւնների միջև պայմանագրային յարաբերութիւններ հաստատելու համար՝ Հայաստանի Հանրա-